ՁԵՎ N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 57

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակայ և գործառնական նշանակությունը
01-003-0402-0198 կադաստրային ծածկագրով 1.0 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների /ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության/ հողեր	01-003-0402-0198 կադաստրային ծածկագրով 1.0 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Միաժամանակ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն առաջարկության վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի՝ պայմանով, որ կապահովվի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության գրությամբ ներկայացված պահանջն, ըստ որի նշված հողամասի եզրագծով անցնում է միջին ճնշման d-76 մմ տրամագծով վերգետնյա գազատար: Կառուցապատման աշխատանքներ

իրականացնելիս անհրաժեշտ է ապահովել ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի N787-Ն որոշմամբ հաստատված «Գազի տնտեսությունում գազատարների և դրանց վրա գտնվող ինժեներական կառույցների անվտանգության գոտիների չափերի ու դրանց օգտագործման կարգի» պահանջներն՝ ապահովելով պայմաններ մատակարարի կողմից նշված գազատարների պատշաճ շահագործումը և սպասարկումը ՀՀ գործող տեխնիկական կանոնակարգերի համաձայն իրականացնելու համար կամ խոչընդոտ հանդիսանալու դեպքում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի N95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 2.17-րդ կետի համաձայն իրականացնել նշված տարածքում առկա գործող գազատարի վերատեղադրում կառուցապատողի միջոցներով՝ ըստ նախագծային լուծման, նախապես Երևանի ԳԳ մասնաճյուղից տեխնիկական պայմաններ ստանալու դեպքում /տարածքի սխեման գործող գազատարների նշագծումով կցվում է/:

4. Հողային աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է ապահովել նաև «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերության աշխատակցի ներկայությունը, քանի որ հողամասում առկա են «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը պատկանող կոմունիկացիաներ և առանց վերջինների տեղափոխման հողային աշխատանքներ կատարելն արգելվում է /սխեման կցվում է/:

5. Երևանի քաղաքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Երևան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «17» « մարտի » 2022թ.